ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 976-Ա

01 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 01.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 977-Ա

01 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-0640-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի Զանգվածի թիվ 7 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Հունան Ռուբիկի Հովսեփյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0640-0026 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 24.03.2026թ. տրված՝ թիվ Ամ-365 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011XP6ANGA/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 221 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 978Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԹԻՎ 5/55 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց Թաղամասի թիվ 5 շենքի թիվ 49 բնակարանի բնակիչ Անահին Ստյոպայի Ստեփանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 24.05.2025թ. տրված թիվ 21052025-04-0071 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 5/55 հասցեում գտնվող ավտոտնակի նպատակային ու գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 5/55 հասցեում գտնվող ավտոտնակի նպատակային նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական տարածքի:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 5/55 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04463138

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 979Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՄԻԽԱՅԻԼ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 1/1 տան բնակիչ Նշան Ալիկի Ֆահրադյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 24.03.2026թ. տրված թիվ 24032026-04-0011 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Լերմոնտովի փողոցի թիվ 19 հասցեում գտնվող բնակելի նշանակության շինությունների նպատակային ու գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Լերմոնտովի փողոցի թիվ 19 հասցեում գտնվող բնակելի նշանակության շինությունների նպատակային նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական տարածքի:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Լերմոնտովի փողոցի թիվ 19 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 980Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.02543 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.04.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011FKACRDA.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող բնակելի նշանակության շինություններին և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.02543հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 42/2:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 981Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2023Z93CQJ և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 15.04.2026թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02543հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 45.9քմ /45.9քմ արտաքին և 41.9քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02543հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 45.9քմ /45.9քմ արտաքին և 41.9քմ ներքին/ մակերեսով բնակելի նշանակության շինությունները:
3.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02543հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Լևոն Մարատի Սայադյանին:
4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 982Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0206ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 14.01.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011HQZHGAT.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասի 1-ին փողոցում գտնվող 0.0206հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամասի 1-ին փողոց թիվ 2/1:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Է.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT * 04463138

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 983Ա

01 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 12.06.2026թ. թիվ Կ-12062026-04-0140 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի թիվ 12/4 հասցեում գտնվող 0.0047հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Է. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 984-Ա

03 հուլիսի 2026 թ. **ք. Էջմիածին**

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պայմանագրի					Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/			Պատվիրատուի անվանումը	Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
	ծածկագիրը	չափաբաժնի համարը	գնման առարկայի անվանումը	չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/	անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ՀՀ ԱՄՎՀ ՀՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՀՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-4	20	պանիր	500000	320000	«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 1 «Հասմիկ» մսուր-մանկապարտեզ ՊՈԱԿ-ի	01.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման մատակարարումից	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		42	խնձոր	180000	111000							
		58	միս տավարի	1400000	1240000							
		59	փափկամիս տավարի	1520000	1349000							

ՀՀ ԱՄՎՀ ՇՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՇՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-4	21	պանիր	625000	400000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 2 «Շուշան» մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		45	խնձոր	240000	148000							
		61	միս տավարի	1750000	1550000							
		62	փափկամիս տավարի	2000000	1775000							
ՀՀ ԱՄՎՀ ԾՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ԾՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-4	21	պանիր	1425000	912000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		43	խնձոր	660000	407000							
		59	միս տավարի	5544000	4910400							
		60	փափկամիս տավարի	3168000	2811600							
ՀՀ ԱՄՎՀ ՁՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՁՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-4	21	պանիր	1325000	848000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		25	կարտոֆիլ	1200000	912000							
		45	խնձոր	540000	333000							
		61	միս տավարի	4200000	3720000							
		62	փափկամիս տավարի	2400000	2130000							
ՀՀ ԱՄՎՀ ԳՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ԳՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-3	21	պանիր	400000	256000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ	01.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		45	խնձոր	150000	92500							
		61	միս տավարի	1225000	1085000							
		62	փափկամիս տավարի	1600000	1420000							
ՀՀ ԱՄՎՀ ԱՐՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ԱՐՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-3	21	պանիր	1050000	672000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 6 «Արևիկ» մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ	01.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		44	խնձոր	240000	148000							
		60	միս տավարի	3360000	2976000							
		61	փափկամիս տավարի	2600000	2307500							
ՀՀ ԱՄՎՀ ՀՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՀՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-3	21	պանիր	500000	320000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		45	խնձոր	150000	92500							
		61	միս տավարի	1225000	1085000							
		62	փափկամիս տավարի	1400000	1242500							
ՀՀ ԱՄՎՀ ՈՍՏՄՊ ԳՀԱՊՁ Բ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՈՍՏՄՊ ԳՀԱՊ	21	պանիր	750000	480000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ	01.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի
		44	խնձոր	330000	203500							
		59	փափկամիս տավարի	3000000	2662500							

	ՁԲ 26/2-4		րի					34	8 «Ոստան» մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ		ն խախտվել է մատակարարման ժամկետը/	նի մատակարարումից
ՀՀ ԱՄՎՀ ԱԻՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ԱԻՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-4	21	պանիր	350000	224000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Ադա» մսուր - մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		45	խնձոր	270000	166500							
		61	միս տավարի	1001000	886600							
		62	փափկամիս տավարի	1144000	1015300							
ՀՀ ԱՄՎՀ ՈՍՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2	ՀՀ ԱՄՎՀ ՈՍՄՊ ԳՀԱՊ ՁԲ 26/2-4	21	պանիր	325000	208000	«ՊՐԵՍ ՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ	04461441	Արմավիր, ք. Արմավիր Սահմանապահների 34	Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 10 «Ոսկեհատ» մանկապարտեզ ՀՈԱԿ	02.07.2026 թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականորեն խախտվել է մատակարարման ժամկետը/	Վաճառողը գրավոր հրաժարվել է չափաբաժնի մատակարարումից
		25	կարտոֆիլ	275000	209000							
		58	միս տավարի	1120000	992000							
		59	փափկամիս տավարի	640000	568000							

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ[illegible] Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 985-Ա

03 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՄԵՆ ՀՐԱՆՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Մրգաստան գյուղի 7-րդ փողոցի թիվ 16 տան բնակիչ Արմեն Հրանտի Հարությունյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 11.10.2023թ. հաստատված 6288 և 6290 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, Խոյ համայնքի ղեկավարի կողմից 10.08.2023թ. տրված քաղվածքի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 24.12.2025թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Մրգաստան գյուղում գտնվող բնակելի տունը և օժանդակ շինությունները պատկանում են Արմեն Հրանտի Հարությունյանին.

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.1163հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին

պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Մրգաստան գյուղում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները համարել Արմեն Հրանտի Հարությունյանի /ծնված 19.03.1962թ./սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 986Ա

03 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՈՂԱՎԱԶԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 374/ կողմից 18.05.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011GQTWHRC.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասում գտնվող լողավազանին և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.92433հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս, թիվ 122/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ * 04463138 * РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА * REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 987Ա

03 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԼՈՂԱՎԱԶԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0374/ կողմից 18.05.2026թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.92433հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 111.2քմ /111.2քմ արտաքին և 95.6քմ ներքին/ մակերեսով լողավազանը համարել Վաղարշապատ համայնքի սեփականությունը:
2. 111.2քմ /111.2քմ արտաքին և 95.6քմ ներքին/ մակերեսով լողավազանը համարել ինքնակամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 988-Ա

03 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 75/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով,ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով «ՆՅՈՒ ԹԱՈՒՆ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Բորիս Արմենի Բաղդասարյանի լիազորված անձ Զարուհի Կարենի Մամիկոնյանի դիմումը «ՆՅՈՒ ԹԱՈՒՆ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11062026-04-0111 տրված՝ 11.06.2026թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040112HXHNV7, 04011BPHTFAR, 04011YEWSVT3, 04011YNVR7V2, /.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ս. Շահումյան փողոցի թիվ 75/5 շենքի 4-րդ մասնաշենքում գտնվող տարածքները բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ս. Շահումյան փողոց, 75/5 շենք, 4-րդ մասնաշենք թիվ 76 տարածք,
Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ս. Շահումյան փողոց, 75/5 շենք,4-րդ մասնաշենք թիվ 77տարածք,
Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ս. Շահումյան փողոց, 75/5 շենք, 4-րդ մասնաշենք թիվ 78 տարածք,
Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին

Ս. Շահումյան փողոց, 75/5 շենք, 4-րդ մասնաշենք թիվ 79 տարածք:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 989-Ա

06 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 06.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 990-Ա

06 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԹԻՎ 01/26 ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 01/26 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» Կրոնական Կազմակերպությունը /հասցե՝ ք.Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից /VXSOFT ծրագիր/ ստացված տեղեկանքների հիման վրա, 2026 թվականի մայիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանը «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ին 06.05.2026 թվականի թիվ 2193 գրությամբ ծանուցել է պարտավորությունների մասին: «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի կողմից 2026 թվականի մայիսի 14-ին ուղարկվել է թիվ 26/063 դիմումը՝ լսումներ անցկացնելու մասին:

2026 թվականի մայիսի 25-ին և հունիսի 2-ին հրավիրվել են լսումներ թիվ 01/26 վարչական գործով:

2026 թվականի մայիսի 25-ին «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից ստացվել է դիմում՝ կից բացատրություններով, մասնավորապես, ներկայացված բացատրություններում նշվում է, որ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքում առկա են անհամապատասխանություններ, տեղեկանքում ներկայացված որոշ գույքեր ՀՀ կառավարության որոշման համաձայն ազատված են անշարժ գույքի հարկից, առկա են գույքեր, որոնք կրկնվում են տեղեկանքի տարբեր տողերում կամ առկա չեն

անշարժ գույքերը նույնականացնող տեղեկություններ, կամ առկա են այնպիսի անշարժ գույքեր, որոնք հարկային օրենսգրքով են ազատված անշարժ գույքի հարկից կամ տեղեկանքում ներառված են այնպիսի գույքեր, որոնք ՀՀ կառավարության կողմից ետ են վերցվել «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ից:

Հաշվի առնելով ներկայացված բացատրությունները համայնքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի կողմից դիմումով բարձրացված հարցերը պարզելու ուղղությամբ, մասնավորապես,Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի ՀՀ կադաստրի կոմիտեին ուղղված 01.06.2026 թվականի թիվ 2790 գրությամբ, խնդրվել է տրամադրել տեղեկատվություն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ սեփականության կամ անհատույց օգտագործման և/կամ այլ իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ:

Միաժամանակ գրություն է ուղղվել ՀՀ Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունից համայնքին պարզաբանում տրամադրելու համար, որի համաձայն խնդրվել է պարզաբանել արդյո՞ք հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով կիրառելի են Հայաստանի Հանրապետության կառավարության 28.02.2013 թվականի թիվ 178-Ա և 15.06.2017 թվականի թիվ 686-Ա որոշումները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ Կրոնական Կազմակերպությանը անշարժ գույքի հարկից ազատելու մասով:

Այնուհետև, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից 01.06.2026 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով համայնքապետարանին է ուղարկվել թվով 62 անշարժ գույքերի վերաբերյալ սեփականության վկայականների պատճենները:

Հիմք ընդունելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ առաջացել էր անհրաժեշտություն պարզելու 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական վարույթում ներառված անշարժ գույքերի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված ցանկում գտնվելու հանգամանքը, համապատասխան մարմիններին ուղղված հարցումների պատասխանները ստանալու նպատակով և «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից տրամադրված թվով 62 անշարժ գույքերի սեփականության վկայականների ուսումնասիրության և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգում զետեղված գույքերի հետ համադրելու անհրաժեշտությունից ելնելով, Վաղարշապատ համայնքի 05.06.2026 թվականի թիվ 821-Ա որոշմամբ վարչական վարույթը կասեցվել էր՝ որոշումն ընդունելու օրվանից 30 օր ժամկետով:

Վերոնշյալ ընթացքում համայնքի կողմից իրականացվել են «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից տրամադրված թվով 62 անշարժ գույքերի սեփականության վկայականների ուսումնասիրություն և որոշ անշարժ գույքեր նույնականացվել են անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգում զետեղված գույքերի հետ, սակայն առկա են որոշակի անհամապատասխանություններ:

Վարույթի կասեցման ընթացքում համայնքի կողմից կատարված հարցումներին Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունից և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացվել էին պատասխաններ, որոնցով համայնքի հարցումներին պարազբանումներ չէին ներկայացվել, ուստի անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ գրություններ ուղղել ՀՀ կադաստրի կոմիտեին և ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը և անհրաժեշտությունից ելնելով, Վաղարշապատի համայնքապետարանի հարկային պարտավորությունների խախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը կրկին առաջարկել է 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական վարույթը կասեցնել՝ ևս 30 օր ժամկետով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

3. Սույն օրենքով նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով:

Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամկետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18-00-ին»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի երկրորդ պարբերության համաձայն՝

«...վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«... Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը»:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝

«...Վարչական վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա

հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 46-րդ, 49-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կասեցնել 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական գործի վարույթը՝ սույն որոշումն ընդունելու օրվանից 30 օր ժամկետով, մինչև 05.08.2026 թվականը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**